ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Կազմեց՝	Ռազմիկ Օհանյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ
Կազմման հիմքը՝	ՀՀ կառավարության 02.08.2018 թ. № 878-Ն որոշման հավելվածի 15-րդ կետ, Պայմանագիր № 33 առ 29.09.2022թ.
Կազմման ամսաթիվը և վայրը՝	11.07.2023թ., ք. Երևան
Հաշվետու ժամանակաշրջան՝	2023թ. 1-ին կիսամյակ

Համաձայն վերոնշյալ պայմանագրի պահանջների, իմ կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Համապատասխան հանձնարարականների համաձայն, հավաքագրել եմ կատարված աուդիտորական առաջադրանքների հաշվետվությունները, դրանք էլեկտրոնային ձևաչափով փոխանցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի անդամներին, նրանց կողմից հաշվետվությունների հետ կապված հարցերի վերաբերյալ տվել եմ ներքին աուդիտին վերաբերող անհրաժեշտ մասնագիտական պարզաբանումներ:

2. Ըստ անհրաժեշտության, հաստատված աուդիտորական առաջադրանքների շրջանակներում կազմակերպել եմ ներքին աուդիտորական խմբի անդամների և ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների հետ աուդիտորական առաջադրանքի հետ կապված քննարկումներ, մասնակացել այդ քննարկումներին:

3. Կազմակերպել և մասնակցել եմ աուդիտի ենթարկված միավորների պատասխանատուների հետ ներքին աուդիտի հաշվետվությամբ արձանագրված դիտարկումների վերաբերյալ քննարկումներին, անհրաժեշտության դեպքում կատարելով եմ մասնագիտական խնդիրների բացահայտումներ, այդ խնդիրների վերաբերյալ առաջարկել եմ մասնագիտական լուծումներ, ինչպես նաև ապահովել եմ այդ քննարկումների հետ կապված գրագրությունը և ստացված պատասխանների տրամադրումը ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուներին:

4. Աջակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Քրֆեքթ աուդիտ» ՍՊԸ-ին, ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստերի նախապատրաստման, անհրաժեշտ փաստաթղթերի շրջանառման և անցկացման և արձանագրման հարցերում:

5. Հրավիրված անձի կարգավիճակով մասնակցել եմ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստերին, մասնակից դարձել դրանցում՝ներկայացված

աուդիտի հաշվետվությունների քննարկումներին, ինչպես նաև նիստերի ընթացքում բարձրացված՝ ինձ ուղղված հարցադրումներին տվել ներքին աուդիտին վերաբերող անհրաժեշտ մասնագիտական պարզաբանումներ:

6. Համապատասխան հանձնարականների համաձայն կազմել և շրջանառել եմ ներքին աուդիտի առաջադրանքների և դրա արդյունքների վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի հրամանի նախագծեր, ինչպես նաև համապատասխան պետական մարմիններին և ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն համակարգի աուդիտի միավորներին ուղղված գրություններ:

7. Կազմել և շրջանառել եմ պետական մարմիններից և ԿԳՄՍ նախարարությանն համակարգի կազմակերպություններից ԿԳՄՍ նախարարությանն ուղղված՝ ներքին աուդիտին առնչվող գրությունների մասնագիտական պատասխաններ:

8. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կարիքների համար ներքին աուդիտ ծառայությունների գնման նպատակով, ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարողի գնման գործընթացի կազմակերպման կարգին համապատասխան, հայտը նախագծողի պարտականությամբ, ընդգրկվել եմ պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված մասնագիտական խումբի (պատասխանատու ստորաբաժանման), ինչպես նաև գնահատող հանձնաժողովի կազմերում, կատարելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների համար նախատեսված գործառույթները:

9. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կարիքների համար ներքին աուդիտ ծառայությունների գնման նպատակով, կազմել եմ ներքին աուդիտի ծառայությունների տեխնիկական առաջադրանքը:

10. ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի համապատասխան հանձնարարականներով, ընդգրկվելով նախարարության ենթակայության կազմակերպություններում ուսումնասիրություններ կատարող աշխատանքային խմբերում, կատարել եմ պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը տրամադրված հատկացումների շրջանակներում համակարգի կազմակերպությունների ծախսերի և եկամուտների վերաբերյալ վերլուծություններ ու ուսումնասիրություններ, ներկայացրել առանձին փաստաթղթեր:

11. Կատարել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի այլ հանձնարարականները:

ՌԱԶՄԻԿ ՕՀԱՆՅԱՆ